Հաշվետվություն

2024 թվականի մարտի 17-ից 19-ը Իսպանիայի Թագավորություն (Սևիլյա) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոն**
   Սարգիս Արամյան, Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման ղեկավար

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Իսպանիայի Թագավորություն, Սևիլյա, 2024 թվականի մարտի 17-ից 19-ը

3. **Հրավիրող կողմը.**
   «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիա

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիայի գլխավոր ասամբլեային: Կադաստրի կոմիտեն հանդիսանում է «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիայի լիիրավ անդամ:

5. **Քննարկված թեմաները.**

- Կառավարման խորհրդի աշխատանքների, ասոցիացիայի ֆինանսական հաշվետվությունների ներկայացում,
- 2024 թվականի գործառնական պլանի, բյուջեի և անդամակցության հաստատում,
- Կառավարման խորհրդի նոր անդամների և նախագահի թեկնածուների ընտրություն,
- Աշխարհատարածական տվյալները՝ ուղղված գլոբալ մարտահրավերներին, կլիմայի փոփոխություն, աղետների արձագանքում
- Արհեստական բանականություն՝ երկրատարածական տեղեկատվության (GI) ապագան արհեստական բանականության (AI) դարաշրջանում,
- Նորագույն տեխնոլոգիաներ և նորարարություն
- Երկրատարածական տվյալների երկարաժամկետ կայունություն,
- Բիզնես մոդելներ:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

«Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիայի գլխավոր ասամբլեայի օրակարգի համաձայն՝ անդրադարձ կատարվեց 2024 թվականին ասոցիացիայի շրջանակներում նախատեսվող աշխատանքներին, կարևորվեց անդամ երկրների քարտեզագրական և գեոդեզիական մարմինների ներգրավվածությունը ոլորտային միջոցառումներին և ծրագրերին:

Ներկայացվեց կառավարման խորհրդի հաշվետվությունը, հաստատվեց 2024 թվականի գործառնական պլանը և բյուջեն, ինչպես նաև ներկայացվեցին «Բաց

քարտեզներ Եվրոպայի համար» նախագծի ցուցադրությունը և «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիայի տվյալների ռազմավարության կայունությունը:

Տեղի են ունեցել կլոր սեղան-քննարկումներ՝ բիզնես մոդելների, տարածական տվյալների կարևորության, արհեստական բանականության, ինչպես նաև «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիայի անդամակցության ռազմավարության վերաբերյալ:

Գլխավոր ասամբլեայի շրջանակներում կայացել են անհատական հանդիպումներ «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիայի նախագահ Քոլին Բրեյի և գլխավոր քարտուղար Սալի Փեյնի հետ: Քննարկման ընթացքում կարևորվել է Կադաստրի կոմիտեի դերը «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիայի հետագա աշխատանքներում: Քննարկվել են փորձի փոխանակման հնարավոր նոր ուղիները, կարևորվել են ոլորտի ներկայացուցիչների՝ առցանց եղանակով վերապատրաստման դասընթացները:

Վերոնշյալ ասամբլեայի շրջանակներում կայացել է նաև Մոլդովայի Հանրապետության գեոդեզիայի, քարտեզագրության և կադաստրի գործակալության նորաշանակ ղեկավար Իվան Դանիի հետ հանդիպումը, քննարկվել են երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր, ներկայացվել է գրանցման ընթացակարգը, կատարված բարեփոխումները, տեղի է ունեցել փորձի փոխանակում, ինչպես նաև հետագա համագործակցության շրջանակներում համաձայնություն է ձեռք բերվել փոխըմբռնման հուշագիր ստորագրելու վերաբերյալ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Գլխավոր ասամբլեայի ժամանակ ընտրվեցին կառավարման խորհրդի նոր անդամներ, ինչպես նաև ասոցիացիայի նախագահ:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց 2025 թվականի «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիայի գլխավոր ասամբլեան անցկացնել Լատվիայում:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկվեց շարունակել սերտ համագործակցությունը ասոցիացիայի շրջանակներում, ինչպես նաև լիազոր մարմինների միջև խորացնել մասնագիտական փորձի փոխանակումը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Սարգիս Արամյան 22.03.2024 թ.